

Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Որմնադիր
I. Դերը՝	<p>Որմնադիրն իրականացնում է աշխատատեղի, որմնային աշխատանքներում կիրառվող շինարարական նյութերի, գործիքների և սարքավորումների նախապատրաստում, օգտագործում: Օգտվում է նախագծերից, կատարում չափումներ, կառուցում պահանջվող կոնստրուկցիանները /հիմքեր, պատեր, առանձին հենարաններ, թաղեր, կամարներ, սյուներ/՝ ապահովելով երկրաչափական չափերը և դիրքերը: Պատրաստում և ստուգում է փայտամածների և լաստակների կայունությունը: Իրականացնում է բնական և արհեստական քարե պատերի և միջնորմների շարվածք՝ ապահովելով շարվածքի նիստերի և անկյունների ուղղաձգությունը, շարքերի հորիզոնականությունը, կատարում վնասված հատվածների վերականգնում և վերանորոգում, բացում բացվածքներ, իրականացնում կարանների հարդարում:</p>
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Աշխատատեղի, գործիքների, սարքավորումների և օգտագործվող նյութերի նախապատրաստում	
Աշխատանքային գործընթացը	<p>Հազնում է համապատասխան արտահագուստ: Նախապատրաստում է աշխատատեղը, անհրաժեշտ նյութերը, գործիքները և սարքավորումները, ստուգում է վերջիններիս սարքինությունը, անհրաժեշտության դեպքում կատարում է պարզ վերանորոգման աշխատանքներ և վերացնում է անսարքությունները:</p>
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Աշխատատեղը և անհրաժեշտ նյութերը նախապատրաստված են: • Գործիքները և սարքավորումները աշխատում են անխափան: • Անվտանգության կանոնները պահպանված են:
Խնդիրների բնագավառ 2. Պատերի կառուցման աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	<p>Պատրաստում է շաղախներ: Նախապատրաստում է քարերը և այլ իրերը պատերի շարի համար: Կատարում է համապատասխան չափումներ՝ օգտվելով նախագծից: Ճիշտ է կառուցում կամ հավաքում աշխատանքային փայտամածները և լաստակները, ստուգում է դրանց ամրությունը: Իրականացնում է պատերի շարվածք, կարանների հարդարում, ստուգում նիստերի և անկյունների ուղղաձգությունը, շարքերի հորիզոնականությունը, անհրաժեշտության դեպքում վերացնում է թերությունները:</p>

	Աշխատանքներն ավարտելուց հետո հավաքում կամ քանդում է փայտամածները և լաստակները:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Շաղախները պատրաստված են: • Աշխատանքային հարթակները կառուցված են և ամրացված: • Պատերի շարն իրականացված է: • Կարաններն հարդարված են, պատերն ուղիղ են: • Ի հայտ եկած թերությունները շտկված են: • Հարկ եղած դեպքում պատերի գեղարվեստական ձևավորման տարրերը կառուցված են և ամրացված (բազրիքներ, քիվեր և այլն): • Անվտանգության կանոնները պահպանված են:
Խնդիրների բնագավառ 3. Բացվածքների իրականացում, վնասված հատվածների վերականգնում և վերանորոգում:	
Աշխատանքային գործընթացը	Ըստ նախագծի իրականացնում է ուղղանկյուն և կամարածև բացվածքներ, կատարում է չափումներ պատրաստի պատերում բացվածքներ իրականացնելու համար, կատարում է ամրակապումներ և բացում բացվածքներ: Վերականգնում և վերանորոգում է վնասված հատվածները:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Բացվածքներն իրականացված են: • Վնասված հատվածները վերականգնված են կամ վերանորոգված:
III. Պատասխանատվությունը	Պատասխանատու է պատերի կառուցման ժամանակ քարերի տեղակայման, քարակապման, կարանների լցման և դրանց հաստության ճշտության, շարվածքի մակերրոյթների ու անկյունների ուղաձգության, հորիզոնականության ու ուղղաձգության, վնասված քարերի նորոգման և փոխարինման աշխատանքների որակի, ժամկետների, կատարման ժամանակ անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային կանոնների պահանջների պահպանման համար:
IV. Լեզուները	<ul style="list-style-type: none"> • Հայերեն • օտար լեզվի մասնակի իմացություն
V. Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • MS office՝ բավարար • Internet Explorer՝ բավարար
VI. Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> • Շինարարական նյութեր վերաբերյալ գիտելիքներ • Քարե և ամրաքարե կոնստրուկցիաների մասին գիտելիքներ • Շին. արտադրության տեխնոլոգիայի իմացություն • Սարքավորումների և դրանց օգտագործման առանձնահատկությունների իմացություն

	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքի պաշտպանության, անվտանգության, տեխնիկայի, հակահրդեհային պաշտպանության նորմերի և կանոնների իմացություն
VII. Կարողությունները և հմտությունները	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային անվտանգության և առողջության պահպանման նորմատիվ պահանջները պահպանելու կարողություն • Հանձնարարականները ժամանակին և ճիշտ կատարելու պատրաստակամություն, • Չափումներ կատարելու և նախագծերից օգտվելու կարողություն • Գործիքներից և սարքերից օգտվելու կարողություն և հմտություն • Շաղախներ պատրաստելու կարողություն • Շարվածք իրականացնելու կարողություն և հմտություն:
VIII. Վերաբերմունքը	<ul style="list-style-type: none"> • Պարտաճանաչություն, պատասխանատվություն, արագ կողմնորոշվելու կարողություն, անհատական և թիմային աշխատանք կատարելու ունակություն, մարդկանց հետ շփվելու և սթրեսը կառավարելու կարողություն: